ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Խաղը որպես կրտսեր դպրոցականների ուսման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Հայարփի Միսակյան

Աբովյանի Ն. Վանյանի անվան N5 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Գրականության ակնարկ 5
Խաղը որպես ուսուցանելու միջոց 8
Հետազոտության ընթացքը: Գործնական համատեքստ 10
Եզրակացություն 16
Գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խաղը մարդուն ուղեկցել է պատմական զարգացման, բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն զվարճանքի զբաղմունք, այլև որոշ դեպքերում կարողությունների ձևավորման միջոց: Խաղային գործունեության ժամանակ կարելի է երեխային ճանաչել բոլոր կողմերով:

Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունը պարզ արտացոլվում է խաղի մեջ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության գործում խաղին՝ հատուկ կարևորություն է տրվում: Մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Երեխաների ուսուցման և դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունեն խաղերը: Երեխան սովորում խաղալու ընթացքում: Խաղային իրավիճակում գիտելիքներն ավելի հեշտ են ընկալվում: Պասիվ երեխաների մաթեմատիկական և լեզվական ունակությունների ձևավորման ու զարգացման գործում մեծ դեր է խաղում խաղը: Խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց, ունի նաև ուսուցողական, դաստիարակչական նշանակություն: Այդ դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար:

Երեխաների համար խաղը շատ հոգեհարազատ և սիրված է: Իսկ խաղը փոքրիկների կողմից ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Կրտսեր դպրոցականների ուսումնական խնդիրները լուծելիս կիրառվում են նաև դիտակտիվ խաղեր:

Երբ երեխան մուտք է գործում դպրոց առաջատար գործունեություն է դառնում ուսումը, երեխան չի կարողանում զերծ մնալ խաղերից: Իսկ երբ ուսումը տարվում է խաղերով, դրանք երեխայի համար դառնում են ավելի հետաքրքիր և ցանկալի: Խաղի միջոցով ուսումնական գործունեությունը՝ կազմակերպելիս անհետանում են որոշակի խանգարող հանգամանքները ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հարաբերությունները:

Այսպիսի իրավիճակում աշակերտը կարողանում է անկաշկանդ արտահայտել իր մտքերը: Խաղի միջոցով աշակերտը աննկատ ընդգրկվում է ուսուցման այս կամ այն գործընթացում և շատ հաճախ կարողանում է իր կարծիքը արտահայտել առաջացած խնդիրներում, երեխան ավելի է կենտրոնանում և մտապահում ուսուցանվող նյութը: Հետաքրքիր խաղը ստեղծում է աշխույժ, զվարթ տրամադրություն, երեխաների կյանքը դառնում լիարժեք և բավարարում նրանց պահանջմունքը:

Թեմայի ուսումնասիրման նպատակներն ու խնդիրները:

Այս աշխատանքը նախատեսված է կրտսեր դպրոցականին խաղերի միջոցով ուսուցման գործընթացի կազմակերպմանը, որոնք շատ արդյունավետ ու նպատակային են: Խաղերն ունեն տարբեր նպատակներ և յուրովի լուծում են ուսումնական տարբեր խնդիրներ: Խաղերի միջոցով ուսումնական գործընթացը ավելի հետաքրքիր և աշխույժ է դառնում: Իմ նպատակներն են՝

- զարգացնել աշակերտների տեսողական, լսողական ուշադրությունը, հիշողությունը,
- միմյանց հարգելու կարողության զարգացումը,
- Սովորեցնել գնահատել ընկերների գործունեությունը,
- խմբով աշխատելու կարողության զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Երեխաների խաղային գործունեության անհրաժեշտության մասին գրել են բազմաթիվ մանկավարժներ, հոգեբաններ: Նրանք բոլորն էլ համարում են, որ խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Գաղտնիք չէ, որ երեխան խաղերի միջոցով կրկնում է մեծերի գործունեությունը և խաղալով իր վրա է վերցնում նրանց սոցիալական դերը՝ այն ներկայացնելով խաղային գործողություններով:

Կրտսեր դպրոցականներն իրականացնում են մարդու գործունեության բոլոր ձևերը՝ խաղ, ուսում, աշխատանք, սակայն նրանց խաղային գործունեության բնույթն էականորեն տարբերվում է գործունեության մյուս ձևերից:

Նախ նշենք, որ սովորելու և խաղալու ցանկությունը ողջ կրտսեր դպրոցական տարիքում զուգորդվում է, և դժվար է որոշել թե որ գործունեությունը ծավալելու ձգտումն է գերիշխում այդ տարիքի երեխաների մեջ: Պարզապես անառարկելի է, պայմանավորված կրտսեր դպրոցական տարիքի փուլերի առանձնահատկություններով՝ խաղերը փոխվում են դառնալով ավելի բազմազան, ավելի ինտելեկտուալ ու իրականացման քայլերի իմաստով՝ ավելի բարդ:

Խաղ, գործողություն, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում որպես ուսուցողական գործիք: «Երեխան ապրում է խաղով՝ խաղով է սովորում, խաղալիս է մտածում, խաղալով է հաշվում, Խաղն է երեխայի գրավականը»: Վ.Ա. Սուխումլինսկի

Խաղը կյանքի մոդել է, որի միջոցով երեխաները ճանաչում են աշխարհը, ձևավորում և զարգանում աշխարհայացքները: Երեխայի համար գրավիչ ու հետաքրքիր զբաղմունքը խաղն է: Դրա համար պարտադիր չէ ստիպել երեխային հաշվել, վարժություն և խնդիր լուծել նրան զրկելով խաղից:

Խաղի դաստիարակչական նշանակությանը մեծ դեր է հատկացրել **Ա.Ս.Մակարենկոն**: Նա գտնում էր, որ երեխան միշտ պետք է խաղա: Երեխան ունի՝ խաղալու կիրք, և այն պետք է բավարարել:Նա միշտ կրկնում էր. Սիրում եք երեխային՝ խաղացե՛ք նրա հետ, խաղացե՛ք իսկական, անկեղծ, և դա կլինի ձեր

ամենամեծ նվերը նրան: Հայ մեծ լուսավորիչ, գրող, մանկավարժ Խաչատուր Աբովյանը մշտապես ընդգծում էր խաղի դաստիարակչական նշանակությունը՝ համոզված, որ երեխան կյանքի և բնության վերաբերյալ առաջին և հավաստի տեղեկությունները ստանում է խաղի միջոցով:

Հովի. Թումանյանի համոզմամբ՝ մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն »: Հովի. Թումանյանի ստեղծած խաղերն ունեն երեխաների ինչպես շարժողական ունակությունները, զարգացնելու, այն է՝ ֆիզիկապես զարգացնող, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ («Առաջին խաղ», «Աստղերի խաղ», «Գույների խաղ», «Հանելուկներ», «Հայկական առածներ», «Հայոց գետերը», «Դդումը», «Տառերի խաղ», Սրամիտ հովիվը»: Թումանյանի մանուկների համար հորինված խաղերի մեջ կա աստղային երկնքի մասին մի խաղ, որը բնութագրելիս բակաստեղծը գրում է «Հաճախ նայեցեք երկնքին: Ձեր հոգին կմեծանա ձեր սիրտը կազնվանա: Մարդիկ միշտ ցած նայելով հոգով են «ցածրանում»: Այդ խաղը համարվում է Թումանյանի կազմած խաղերից ամենաբարդը և որոշակի տարիքային հասունություն է պահանջում:

Համաձայն **Զ. Ֆրոյդի** տեսության՝ խաղը մարդուն բնորոշ գործունեությունն է՝ պայմանա վորված նրա հոգեկանի զարգացմամբ: Խաղը ոչ միայն երեխային զարգացնում է համակողմանի, այն նաև զարգացնում է երեխայի հոգեկան գործընթացները:

Խ. Աբովյանը պահանջում էր չզրկել երեխային «անմեղ խաղերից»: Իր բնական զարգացման ընթացքում՝ առօրյա կյանքում, ամենօրյա գործունեության ընթացքում երեխան ամենից առաջ առնչվում է խաղին: Այդպիսի գիտելիքներ շրջապատող աշխարհի, առարկաների, երևույթների մասին:

Հովի. Թումանյանը նույնպես մեծ կարևորություն է տալիս խաղին. «Խաղը մարդու օրինական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»:

Կ. Ուշինսկին բարձր է գնահատել խաղի դերը՝ որպես երեխաների ինքնուրույնության ու ստեղծագործական կարողությունների դրսևորման լավագույն հնարավորություն: Նա գրել է. <<Թույլ տվեք երեխային մի քիչ շարժվելու և նա ձեզ կնվիրի ուշադրության 10 րոպե: Իսկ աշխույժ ուշադրության 10 րոպեն, եթե դուք կարողանաք օգտագործել մի ամբողջ շաբաթվա կիսաքուն պարապմունքներից ավելի արդյունք կտա ձեզ>>:

Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է:

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է, որի ընթացքում երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Այդ պատճառով էլ խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, օգնում՝ դաստիարակելու նպատակասլացություն: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները: Այդ նշանակում է, որ միջավայրը թուլացնում է երեխայի զգացմունքային լարվածությունը և տրամադրում խաղին: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ: Անգամ ամենապատիվ աշակերտները մտնում են խաղի մեջ մեծ ցանկությամբ՝ օգտագործելով բոլոր ջանքերը, որպեսզի խաղի ժամանակի ընկերներից հետ չմնալ խաղի ընթացքում հետևելով երեխայի վարքին կարելի է դատել ընտանիքում մեծահասակների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Միաժամանակ երեխան փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ, խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է նաև տարբեր մասնագիտության մարդկանց աշխատանքը:

Այսպիսով՝ այստեղից գալիս ենք այն եզրահանգման, որ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում են երեխաների հետաքրքրությունները տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և ձևավորվում է հագանք աշխատանքի հանդեպ: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է մեծի հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու դրդապատճառը: Սակայն խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պիտի որոշել խաղի կանոնները: Դրանք բխում են գործունեության բնույթից, թեմայից և այլն: Երեխաներն ընդունում են այդ կանոնները, ենթարկվում դրանց սահմանած պայմաններին, անհրաժեշտության

դեպքում՝ փոխում: Այս կերպ վարժվում են հասարակական կյանքի ապրելակերպին՝ իրականացնելով ինքնուրույն ու ստեղծագործական գործունեություն: Ուստի խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ շաղկապված է երևակայությանն ու խոսքին. որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան հստակ է արտահայտվում նրա խոսքը: Իսկ գրագետ խոսքը վկայում է մարդու զարգացած մտածողության մասին: Իսկ խոսքի զարգացման գործընթացն առավելագույն արդյունք է տալիս երբ ուսուցումն ընդանում է խաղերի ձևով, և ընթացքում օգտագործվում են այկտիվ բառապաշարը հարստացնող սյուժետային նկարներ, աշխուժացնող վարժություններ: Խաղի կանոնները որոշելուց հետ պետք է բաշխել դերերը: Դերերեը բաշխելիս պետք է նկատի ունենալ ոչ թե այն, թե ով ավելի լավ կկատարի այդ դերը, այլ այն, թե տվյալ դերն ինչ դրական ազդեցություն կունենա երեխաների փոխհարաբերությունների վրա: Դերային խաղերի համար կարևոր են նաև մասնակիցների կարողություններն ու հմտություններն, որոնց նրանք տիրապետում են: Դրանք ընդհանուր ունակություններն են, որոնք պահանջվում են ցանկացած խաղում հաղորդակցման ունակություն խմբում աշխատելու կարողություն, ղեկավար որակներ, դիրքորոշումն պաշտպանելու ունակություն, անընդհատ փոփոխվող պայմաններում գործելու ունակություն և այլն: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խաղային գործունեության միջոցով երեխան պիտի իր մեջ ավելացնի դրականն ու նվազեցնի բացասական որակները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Կրտսեր դպրոցական տարիքի երեխան ամեն օր առնչվում է նոր առարկաների և երևույթների հետ: Ռուս մեծ գրող Լև Տոլստոյը այս տարիքի մասին ասել է. <<Մի՞թե այդ տարիքում ձեռք չեմ բերել այն ամենը, ինչով ես այժմ ապրում եմ, թերևս ձեռք եմ բերել այնքան, որ հաջորդ տարիների ընթացքում կուտակածս դրա մեկ հարյուրերորդ մասն էլ չի կազմում>>:

Սակայն առանց համապատասխան ղեկավարման և համակարգման՝ գիտելիքների նման կուտակումը կարող է լինել մակերեսային հաճախ նաև սխալ: Դպրոցական մակերեսային, մանկավարժության խնդիրներին են՝ հետևողականորեն հարստացնել երեխաների գիտելիքների պաշարը, համակարգել դրանք, ձևավորել ու զարգացնել նրանց մոտիվացիան դասին: Դպրոցական տարիքում իր առանձնահատուկ հետաքրքրության շնորհիվ երեխան կուտակում է ահռելի քանակությամբ գիտելիքներ, որոնց համակարգման ճանապարհը դրանց համընթաց տրամաբանական մտածողության՝ համեմատելու, կռահելու, ընդհանրացնելու, վերլուծելու համադրելու, հակադրվելու և այլ կարողությունների զարգացումն է:

Ճիշտ է ասված՝ չկան անընդունակ երեխաներ պարզապես վատ հասկանալու, չըմբռնելու պատճառը ոչ բավարար մտավոր դաստիարակությունն է: Նշված հիմնախնդրի լուծումն իրականացվում է մաթեմատիկայի, կերպարվեստի պարապմունքների, զբոսանքների, դիդակտիկ խաղերի նաև դիտումների ընթացքում: Երեխաների տրամաբանական մտածողության զարգացումն իրականացվում է տրամաբանական խնդիրների, դիդակտիկ խաղերի, հանելուկների լուծման, մաթեմատիկական բովանդակությամբ թատերականացված միջոցառումների, ազատ զրույցների, միջառարկայական կապերի հաստատման միջոցով:

Դեռևս նախապատրաստական փուլում աշակերտների մեջ ձևավորվում են տարրական հաշվողական հմտություններ, տարածական պատկերացումներ, առարկաների և դրանց խմբերի միջև հարաբերություններ ստեղծելու

կարողություններ՝ նկարագրել, համեմատել, վերլուծել և այդ հիմքում ընկած է մոտիվացիա: Դասավանդման հիմքում դնում ենք մտածողության զարգացման խնդիրը՝ հաշվի առնելով աշակերտների անհատական առանձնահատկությունները: Ուսուցման արդյունավետ մեթոդները համադրելով խաղային գործունեությանը և ստեղծագործաբար մոտենալով դասագրքի առաջադրանքներին՝ խթանում ենք աշակերտների մտածողությունը: Այդ կերպ դասավանդումը դառնում է գրավիչ հետաքրքիր և տրամադրող:

Հետազոտությունը կատարել եմ Կոտայքի մարզի <<Աբովյանի Ն. Վանյանի անվան N5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի IV դասարանում, որտեղ սովորում են 30 աշակերտ՝ 16 տղա, 14 աղջիկ:

Հետազոտությունը անցկացրել եմ մայրենիի դասին: Խաղի միջոցով փորձել եմ պարզել, թե դասարանում սովորող աշակերտները ինչպես են յուրացնում <<Բառակազմություն>> թեման:

<<Բառակազմություն>> թեման ուսուցանելուն և բառապաշարը հարստացնելուն շատ է օգնում <<Կազմի՛ր ազգակից բառեր>> խաղը:



Քանի որ բառակազմությունն արդեն երեխաներին ցանոթ էր, ապա հեշտ և արագ յուրացվեց։ Աշակերտների միջոցով վերհիշեցինք, որ բառերը ըստ կազմության լինում են՝ պարզ, բարդ, ածանցավոր և բարդածանցավոր։

Պարզ են միայն մեկ արմատից կազմված բառերը։ Օրինակ՝ մարդ, տուն, բույս, գույն։

Ածանցավոր բառերը կազմվում են հետևյալ կաղապարներով՝

Արմատ + Ածանց

Ածանց + Արմատ

Ածանց+ Արմատ+ Ածանց

Օրինակ՝ անվախ, խաղաղություն, անկաշկանդ, անմտություն, անօգնական։

Բարդ բառերը կազմվում են հետևյալ կաղապարներով՝

Արմատ + Արմատ

Արմատ+ Հոդակապ+ Արմատ

Օրինակ՝ ջրափոս, տոմսարկղ, երկրագունդ, արևածաղիկ և այլն։

Բարդածանցավոր բառերը կազմվում են՝

Արմատ + Արմատ + Ածանց

Ածանց + Արմատ + Արմատ

Օրինակ՝ գրադարանավարուհի, զգեստապահարան, անհյուրասեր, տոնախմբություն։

Այս կաղապարները բացատրելուն և սովորեցնելուն զուգընթաց՝ կատարվում են համապատասխան վարժություններ, որպեսզի ձեռք բերված գիտելիքները վերածվեն կարողությունների և հմտությունների։

Դրա համար աշակերտները պետք է կարողանան ինքնուրույնաբար ընտրել այն բառերն ու ածանցները, որոնց միավորումից կարող են նոր բառ կազմել, որոշել տարբեր արմատները միավորելու համար որ եղանակին դիմեն՝ բառերը պարզապես միացնելու՞, թե դրանց միջև հոդակապ դնելու, ենթարկե՞ն որոշակի հնչունափոխության, թե՞ ոչ։

Այսպիսի աշխատանքներ կատարելիս շատ են օգնում բառակազմություն թեմային վերաբերվող խաղերը։ (տես. Հավելվածում)

Բառաստեղծման աշխատանքը ամրապնդելու համար կազմակերպվել է լեզվական խաղեր։

Ահա խաղ-մրցույթի վերածված վարժության արդյունքը չորրորդ դասարանում. անգլուխ, գլխապտույտ, գլխաբաց, գլխիկոր, գլխացավ, գլուխկոտրուկ, գլխակոր, գլխացավ, գլխավոր, գլխագին, գլխուղեղ, գլուխգործոց, գլխաշոր և այլ գլուխ արմատով։ Բացատրել կազմությունն ու իմաստը՝ պահանջելով գործածել նախադասության, խոսքի մեջ։

Բարդ բառով ասա՛, թե ինչպես կարելի է անվանել՝

Ձուկ որսացողին- ձկնորս

Քար տաշողին- քարտաշ

Հայրենիքը սիրողին- հայրենասեր

Արդյունքում երեխաները այդ բառակապակցությունները անվանում են մեկ բառով և սովորում են բառ կազմել իմաստային կաղապարով։

Բառակազմության եղանակները յուրացնելով՝ երեխաներն ավելի գիտակցորեն են օգտագործում իրենց իմացած բառերը՝ դրանք տարբեր կապակցությունների մեջ դնելով բոլորովին նոր բառեր ստանալով։ Սա հսկայական առաջընթաց քայլ է բառապաշարի հարստացման և ընդհանրապես խոսքի զարգացման բնագավառում։

Պարզ, բարդ և ածանցավոր բառերի ուսուցումը բավականին բարդ թեմա է երեխաների ընկալումների շրջանակ ներմուծելու համար, գուցե դեռ վաղ: Այնուամենայնիվ, օգտագործելով խաղային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, հետաքրքրաշարժ լեզվատրամաբանական առաջադրանքները, կհաջողվի այդ հասկացությունը այս կամ այն չափով դարձնել երեխաների սեփականությունը:

Դիտակտիկ խաղերը, ինչպես պնդում են հոգեբանները, խաղային գործունեության գլուխգործոցներն են: Դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին: Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը,մտածողությունը, խոսքը, զգացմունքները, ամրակայվել է հիշողությունը:

Բացի դրանից, խաղային իրավիճակը նպաստում է որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր <<դերը>> և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը: Այս իմաստով հատկապես առանձնանում են դերային խաղերը, որոնց ընթացքում երեխան ընդունում է որևէ սոցիալական դեր:

Նա ապրում է մի իրավիճակ, որը չի եղել իր կյանքի ընթացքում, և դա դաստիարակում է նրան, սովորեցնում է ապրել հասարակական կյանքով: Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե բառակազմական գիտելիքների կրկնությունը իրականացվի <<Բարձունքի նվաճումը>> խաղի տեսքով: Գրատախտակի մոտ են հրավիրվում թիմերի մասնակիցները, որոնք ճիշտ գտնելով բարդ և ածանցավոր բառերը, բարձրանում են բուրգի աստիճաններով, որը նկարված է գրատախտակին: Կհաղթի այն թիմը, որը ճիշտ կգտնի բառերը և ավելի արագ կնվաճի բարձունքը:

Խաղը ակտիվացնում է ուսումնական ամբողջ գործընթացը: Այլ կերպ՝ ակտիվ ուսուցումը ենթադրում է ոչ միայն ուսուցչի ակտիվ դեր, այլև աշակերտի ակտիվություն, ուսումնական գործում փոխհարաբերություններ և ակտիվ

մթնոլորտ: Գրեթե անհնար է իրականացնել ակտիվ ուսուցում-ուսումնառություն՝ առանց խաղի, իսկ առանց ակտիվ ուսուցման՝ անհնար է հասնել արդի կրթական նպատակներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացութ-յունների՝

- Խաղը կրտսեր դպրոցականի համար ուսուցման լավագույն միջոցներից է,
- Խաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնեում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, արագաշարժությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը,
- Խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում է խաղի հզորությունը այն երեխայի համար կարող է դառնալ ոչ միայն ժամանցի ու հանգստի կազմակերպման միջոց, այլև հիմք հանդիսանալ նրանց տրամաբանական մտածողության և արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը,
- Խաղային տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ՝ ցանկացած նյութ երեխաների համար դառնում է ավելի հասկանալի ու հաճելի,
- Օգտագործելով խաղային մեթոդները կրտսեր դպրոցականների ուսուցման գարծընթացում կարելի է գալ այն եզրահանգման,որ դասը դառնում է ավելի արդյունավետ ու նպատակային,
- Խաղի ընթացքում երեխան տիրապետում է վարքի բարոյական նորմերին ու կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման գործում: Զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն պատասխանատվության զգացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջ. Գյուլամիրյան- «Խաղալով սովորենք»-Երևան 2008թ

2. Վ. Ա. Սուխոմլինսկի Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կիև, 1969թ.

3. Ուշինսկի Կ. Դ. Մանկավարժական ընտիր երկեր, Հ-2 Եր, 1959թ.

4. Ն.Բարսեղյան- «Խաղերը, ուսուցման արդյունավետ միջոց» Երևան 2001թ. 5.Մ. Սիմոնյան- «Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց»- Երևան 2004թ.

6. Հ. Մամյան-«Խաղը որպես ուսուցման միջոց: Խաղերի կիրառությունը դպրոցում» Երևան 2013թ.

7. Ֆ.Աճեմյան-«Հիշողությունը զարգացնող խաղեր»-Երևան 1999թ.

8. Ա. Օհանյան-«Ուշադրությունը զարգացնող խաղեր» Երևան 2007թ.

9. Ն. Գրիգորյան--«Ուշադրությունը զարգացնող խաղեր»: Երևան 2012թ.

10. Ա. Բաղդասարյան-«Խաղալով սովորեցնենք»–Երևան 2001թ.

11. Գևորգյան Ա-«Ուսուցում և խաղ»-Երևան 2013թ.

12. Թադևոսյան Ե.«Խաղից անցում ուսումնական գործընթացին»-Երևան 2011թ.

13. Քարամյան Գ. «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական Դասարաններում»-Երևան 2012թ.

Հավելված

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԲԱՌԱԿԱՁՄՈՒԹՅՈՒՆ
ԲԱՌԱԿԱՁՄԻԿ
3+
ՊԱՐԶ ԲԱՌ
ԲԱՐԴ ԲԱՌ
ԴԸ ԳԵՅՄ